

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՂՈՒԱՐԴ ՄԵԼՍԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ

**«ՀՀ Սահմանադրական իրավունքի և միջազգային իրավունքի
հարաբերակցության հիմնահարցերը մարդու և քաղաքացու անձնական
իրավունքների ապահովման ոլորտում»**

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական,
ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք,
պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЭДУАРД МЕЛСИКОВИЧ АВАГЯН

**ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО И
КОНСТИТУЦИОННОГО ПРАВА РА В СФЕРЕ ОБЕСПЕЧЕНИЯ ЛИЧНЫХ
ПРАВ ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА**

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.02 “Публичное право – конституционное,
административное,
финансовое, муниципальное, экологическое, европейское право,
государственное управление”

Ереван – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական
(Սլավոնական) համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ն. Այվազյան**

իրավաբանական գիտությունների
թեկնածու **Ռ. Մախմուդյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի մայիսի 31-
ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի
իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան,
Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի ապրիլի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ա. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском (Славянском)
университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор **А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор **Н. Айвазян**

кандидат юридических наук,
Р. Махмудян

Ведущая организация: Институт философии, социологии и права
НАН Республики Армения

Защита состоится 31 мая 2013г., в 14⁰⁰ часов на заседании
специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 29 апреля 2013 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А. Вагаршян

ԱՇխԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Խորհրդային համակարգի փլուզումից հետո հետխորհրդային նորանկախ երկրներում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններ: Արմատական փոփոխությունների ենթարկվեց աշխարհի քաղաքական քարտեզը: Միջազգային հարաբերությունների զարգացումը համաաշխարհային ինտեգրման գործընթացներում Հայաստանի անմիջական մասնակցության ապահովման խնդիրներ առաջադրեց, ինչը պայմանավորվեց պետությունների փոխադարձ կապի և փոխկախվածության գործոնների ազդեցությամբ: Իսկ դա ենթադրում էր ստեղծել ներպետական և միջազգային իրավունքների փոխգործակցության ապահովման անհրաժեշտ պայմաններ, երաշխիքներ, արդյունավետ կառուցակարգեր:

Միջազգային և ներպետական իրավունքների փոխգործակցությունը հասարակական հարաբերությունների համատեղ կարգավորման հարցում, ոչ բոլոր դարաշրջաններում է գոյություն ունեցել: Այդպիսի փոխգործակցության մասին կարելի է խոսել միայն XX դարից սկսած, երբ պահանջվեցին ստեղծել մարդու իրավունքների ու ազատությունների կայացման ու պաշտպանության երաշխիքներ, շրջակա միջավայրի պահպանման ու օգտագործման առավել բարենպաստ պայմաններ, մարդու իրավունքներին ու մարդկությանը վնաս պատճառող հանցագործությունների, այդ թվում, անդրազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոցներ:

Սակայն, վերջին տասնամյակում հատկանշական էր միջազգային և ներպետական իրավունքների մերձեցման միտումները հատկապես անձի իրավունքների ու ազատությունների բնագավառում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կառուցել իրավական ժողովրդավարական պետություն, ուստի մարդու անձնական իրավունքների և ազատությունների ոլորտում միջազգային հանրաճանաչ չափորոշիչների ներմուծումը ներպետական իրավական համակարգ, պահանջում է առաջին հերթին հաշվի առնել այդ չափորոշիչների իրացման հնարավորությունը սահմանադրաիրավական նորմերում:

Այս խնդիրն ավելի է կարևորվում՝ կապված նաև իրավական, սոցիալական պետության կայացման, քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարական զարգացումների ապահովման և եվրոպական պետությունների ընտանիքին Հայաստանի Հանրապետության ինտեգրման և պետության ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ:

յան հետ:

2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների համատեքստում խնդիր է առաջանում անդրադառնալ ներպետական, հատկապես սահմանադրական իրավունքի և միջազգային իրավունքի փոխգործակցության ուղղությունների և ձևերի վերլուծությանը, սահմանադրաիրավական նորմերում մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ոլորտի միջազգային չափորոշիչների իրացման հիմնախնդիրների ու կառուցակարգերի բացահայտմանը:

Մինչև սույն հետազոտությունը հայրենական իրավագիտության մեջ համակողմանի ու բավարար մակարդակում ուսումնասիրված չէր և ՀՀ սահմանադրական իրավունքում առանձնացված չէր ներպետական և միջազգային իրավունքի նորմերի փոխգործակցությունը մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատություններն ապահովելիս: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ ներպետական օրենսդրության կատարյալ լինելն էականորեն կախված է միջազգային իրավունքի նորմերի իրացման արդյունավետության աստիճանից:

Ատենախոսությունում կատարվել է հիշատակված իրավական համակարգերի հարաբերակցության հիմնախնդիրների համակողմանի հետազոտություն և գիտական արժևորում, կարևորվել են այդ փոխգործակցության անհրաժեշտությունն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում մարդու անձնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորելիս:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ հոդվածի 4-րդ մասերով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ` Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, որոնք կազմում են վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրի մաս, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, և ունեն նախապատվությամբ կիրառման հնարավորություն ազգային իրավունքի նկատմամբ: Սահմանադրական այս նորմերի համատեքստում առանցքային է համարվում, թե ինչպես են իրացվում մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտի միջազգային, հատկապես` եվրոպական չափորոշիչները, երբ Հայաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին: Անհրաժեշտ է նշել, որ վերջին երկու տասնամյակում միջազգային կոնվենցիաների անվերապահ ընդունումը` առանց հաշվի առնելով ազգային օրենսդրության հետ դրանց համակարգային միասնության ապահովման անհրաժեշտությունը, բազմաթիվ ոչ բարենպաստ հետևանքներ կարող են առաջացնել, քանի որ ստանձնած պարտավորությունների կատարումն ինքնին դժվար է

նորանկախ Հայաստանի համար:

Այս առումով, ներպետական և միջազգային իրավունքների հարաբերակցության հարցերի գիտական ցանկացած հետազոտությունը առավել կարևոր են, հատկապես, երբ խոսքը վերաբերում է անձի անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտի միջազգային չափորոշիչների իրացման խնդրին: Այդ համակարգերի հարաբերակցության իրավական հիմնախնդիրն առանձնանում է նաև քաղաքական առումով, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ, ի վերջո, այդ փոխգործակցության ճիշտ հայեցակարգի ընտրությամբ պետք է երաշխավորվի անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև ազգային շահերի պաշտպանությունը:

Բացի այդ, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրանում հետազոտվել են մարդու անձնական իրավունքների և ազատությունների միջազգային չափորոշիչների իրացման ներպետական կառուցակարգերը՝ նորմատիվային և կազմակերպատիրավական:

Բոլոր ժամանակներում ներպետական և միջազգային իրավունքների հարաբերակցության հարցերը հանդիսանում են արդիական՝ գլոբալացման և ինտեգրման այն գործընթացների տեսանկյունից, որոնց մասնակից է նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս հետազոտության մեջ առանձնակի ուշադրություն է դարձվում մարդու և քաղաքացու անձնական իրավունքներին ու ազատություններին, քանի որ հենց դրանք են հանդիսանում առաջնահերթ յուրաքանչյուրի համար: Հենց այս հանգամանքով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը և դրա մշակման անհրաժեշտությունը:

Հետազոտվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը և ատենախոսության տեսական հիմքը: Հայրենական իրավագիտական մտքի ներկայացուցիչներից միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության տարբեր ասպեկտներին անդրադարձել են Ա. Երիցյանը, Գ. Հարությունյանը, Վ. Այվազյանը, Վ. Պողոսյանը, Ա. Հարությունյանը, Ա. Ղազինյանը, Վ. Հովհաննիսյանը և այլոք: Չնայած այն հանգամանքին, որ նրանք կատարել են ահռելի աշխատանք՝ ուսումնասիրելով իրավական այդ համակարգերի փոխգործակցության առանձին հայեցակետեր, այնուամենայնիվ, այսօր շատ հարցեր՝ կապված մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային իրավունքի նորմերի իրացման բնույթի և էության, ինչպես նաև տարբեր երկրներում այդ իրավական ինստիտուտի արտահայտման և գործառնության առանձնահատկությունների հետ, գիտական գրականության մեջ պատշաճ լուծում չեն ստացել:

Հետխորհրդային երկրներում հրապարակվել են խնդրո թեմային նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից հատկանշական են՝ Ս.Ս. Ալեք-

սեւի, Ս.Ա. Ավագյանի, Է.Մ. Ամետիսովի, Վ.Ս. Աֆանասևի, Ն.Վ. Վիտրուկի, Վ.Կ. Բաբաևի, Պ.Ն. Բիրյուկովի, Գ.Վ. Իգնատենկոյի, Մ.Լ. Էնտինի, Վ.Ա. Կարտաշկինի, Յու.Ս. Կոլոսովի, Օ.Ե. Կուտաֆինի, Յու.Ա. Տիխոմիրովի, Վ.Ա. Տունանովի, Ս.Վ. Չերնիշենկոյի, Վ.Տ. Տոմինի, Վ.Ե. Չիրկինի և այլոց աշխատությունները:

Չնայած հետազոտության հարակից թեմաներով աշխատանքների զանգվածայնությանը, այնուամենայնիվ, տեսական և գործնական առումով հիմնախնդիրն ամբողջության լուծված չի, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային և ներպետական նորմերի փոխգործակցության հիմնախնդիրներն առաջին անգամ է ատենախոսության մակարդակում քննարկվում:

Հետազոտության օբյեկտը մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային և ներպետական նորմերի փոխգործակցության տեսական, նորմատիվ իրավական ու գործնական հիմունքներն են:

Հետազոտության առարկան մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային չափորոշիչներն են, միջազգային և ներպետական իրավունքների նորմերի փոխգործակցության ձևերն ու ուղղությունները, այդ չափորոշիչների իրացման նորմատիվային և կազմակերպարական կառուցակարգերը, ինչպես նաև այդ փոխգործակցության սահմանադրական զարգացման հեռանկարները:

Հետազոտության նպատակը հայրենական իրավագիտության մեջ դեռևս չուսումնասիրված ոլորտի՝ միջազգային իրավունքի և ազգային իրավունքի նորմերի հարաբերակցության էության բացահայտումն է, այդ համակարգերի փոխգործակցության հիմնախնդիրների վերհանումն՝ մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատություններն ապահովելիս, միջազգային և ներպետական իրավունքների տեսական հիմքերի ձևավորումը և դրանց փոխգործակցության զարգացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների մշակումը, սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների առաջարկումը: Ըստ այդմ, առաջադրվել են **ատենախոսության հետևյալ խնդիրները.**

ա) ուսումնասիրել միջազգային և ներպետական իրավունքների նորմերի փոխգործակցության տեսական հիմնահարցերը,

բ) բացահայտել մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային չափորոշիչները և ազգային իրավական համակարգում դրանց իրացման հիմնախնդիրները,

գ) ուսումնասիրել մարդու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների ապահովման խնդրում միջազգային և ներ-

պետական իրավունքների հարաբերակցության հիմնական հայեցակարգերը, բացահայտել դրանց էությունը, նշանակությունն ու առանձնահատկությունները,

դ) վերլուծել մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային չափորոշիչների ներպետական իրացման նորմատիվային և կազմակերպատիրավական կառուցակարգերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության օբյեկտի և առարկայի ուսումնասիրման մեթոդական հիմքը կազմում են դիալեկտիկական, տրամաբանական, համակարգակառուցվածքային, վերլուծության, դասակարգման, պատմահամեմատական, համեմատատիրավական և այլ մեթոդները:

Հետազոտության նորմատիվ-իրավական, աղբյուրագիտական և տեղեկատվական հիմքերը: Ուսումնասիրության նորմատիվ-իրավական հիմքը կազմում են՝ ՀՀ Սահմանադրությունը, նաև ԽՍՀՄ, ՀԽՍՀ Սահմանադրությունները, այլ երկրների սահմանադրությունները, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից ընդունված ակտերը, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» և ՀՀ այլ օրենքները: Ատենախոսության աղբյուրագիտության հիմքն են կազմում իրավագիտության՝ թե ընդհանուր տեսական և թե ճյուղային իրավաբանական գիտությունների, քաղաքագիտության և այլ գիտությունների նվաճումները: Հետազոտության համար փորձառնական բազա է հանդիսացել ՀՀ նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության ապահովման միջոցների կիրառման պրակտիկայի վերլուծությունը և այլն:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է հետևյալում.

ա) Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումների համակողմանի վերլուծության հիման վրա համալիր գիտական ուսումնասիրության է ենթարկվել միջազգային և ներպետական իրավունքների փոխգործակցության էությունը, ձևերն ու ուղղությունները,

բ) բացահայտվել են ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնական հայեցակարգերն ու դրանց նշանակությունը մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման համար,

գ) սահմանադրական իրավունքի գիտության շրջանակում առաջին անգամ համապարփակ ձևով ներկայացվել են մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտի միջազգային չափորոշիչների ներպետական իրացման հիմքերը, ուղղությունները, հիմք է դրվել հայրենական սահմանադ-

րական գիտության կողմից դեռևս ոչ ամբողջական ուսումնասիրված ոլորտի՝ ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության հիմնախնդիրները մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման հարցում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները բնութագրող հատկանիշները հետևյալներն են՝ ա) դրանք ունեն իրավական բնույթ, այսինքն, մարդու՝ որպես անհատի նկատմամբ այդ իրավունքները բնութագրում են նրա բնական և անհրաժեշտ վիճակը, և դառնում են իրավունքով ճանաչվող, պաշտպանվող և ապահովվող միայն իրավական ծնակերպում ստանալիս, բ) դրանք անօտարելի են, այսինքն՝ եթե մարդուն չեն նվիրում, ապա նա չի կարող նվիրել, վաճառել, ժառանգաբար փոխանցել այդ իրավունքները, քանի որ դրանք անձից անբաժանելի են և գոյություն ունեն մարդու կեցության փաստի ուժով, գ) դրանք գտնվում են մշտական օգտագործման իրավիճակում և դ) դրանք իրացվում են անմիջականորեն կամ սահմանադրորեն ամրագրված ու պետության կողմից երաշխավորված հնարավորությունների իրականացմամբ հասարակական գործընթացներում:

2. Անձի անձնական իրավունքների ու ազատությունների իրացման նպատակով աշխարհի գրեթե մեծամասնություն կազմող երկրներում մշակվել և ճանաչվել են միջազգային իրավական չափորոշիչներ: Դրանք ընկալվում են որպես միջազգային իրավական հիմնարար փաստաթղթերում ամրագրված նորմերի համակցություն, որոնք ներառում են մարդու՝ կենսականորեն անհրաժեշտ բոլոր անձնական իրավունքները, դրանց անմիջական իրականացման ու պաշտպանության երաշխիքները, ինչպես նաև պետության պարտականությունները այդ նորմերի գործնականում պաշտպանության ու ապահովման կառուցակարգերը:

3. Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ու ապահովման կառուցակարգերում կարևորվում են ներպետական և միջազգային իրավունքի նորմերի միջև սերտ փոխգործակցության ու փոխկապվածության առկայությունը: Այդ հարաբերակցության հիմքում ընկած են երկու հիմնական հայեցակարգեր՝ դուալիստական և մոնիստական, որոնք արտացոլում են այս կամ այն պետության՝ իրականում գոյություն ունեցող շահերը և չեն կարող բացարձականացվել: Այս կամ այն հայեցակարգի ընտրությամբ է պայմանավորված, թե պետությունը ինչպիսի իրավական համակարգ է կառուցելու, որպեսզի ապահովի միջազգային պարտավորությունների կատարումը, այդ թվում՝ մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում: Իսկ դա կարող է իրականացվել ներպետական և մի-

ջազգային իրավունքի փոխգործակցության, մասնավորապես, ուղղություններն ու ձևերն ընդգրկող կառուցակարգերի միջոցով: Պրակտիկայում, անկախ նրանից, թե հայեցակարգերից որն է պաշտպանվում, անհրաժեշտ է լուծել միևնույն հարցերը, դրանք են՝ երկրի տարածքում միջազգային նորմերը գործողության մեջ դնելու, միջազգային իրավական նորմերի իրականացման արդյունավետ կառուցակարգի ստեղծման, ինչպես նաև ներպետական և միջազգային իրավունքի նորմերի կոլիզիաների կանխման և լուծման վերաբերյալ:

4. Միջազգային և ազգային իրավունքի փոխգործակցությունը ենթադրում է հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն, որը կարող է իրագործվել բացառապես պետությունների միջև առկա ակնհայտ արտահայտված համաձայնության հիման վրա, բնականաբար, ազգային իրավունքի նորմերը, ի տարբերություն ներպետական իրավական այլ միջոցների, ուղղակի ներգործություն են ունենում պետության կամաարտահայտման վրա, ինչպես նրա միջազգային իրավական դիրքորոշման արտահայտման մասով, այնպես էլ՝ միջազգային իրավաստեղծ գործընթացներին անմիջական մասնակցության առումով: Այս տրամաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական և միջազգային իրավունքի փոխգործակցության հիմքում ընկած է այդ փոխգործակցության կառուցակարգի բաղկացուցիչ մաս կազմող ներպետական իրավունքի վրա միջազգային իրավունքի ազդեցության ձևերը, մեթոդներն ու դրանցով պայմանավորված սահմանների սահմանումը, որոնք առավել հստակ դրսևորվում են մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում: Հայաստանի Հանրապետությունում դրանք իրացվում են հետևյալ ձևերով՝ միջազգային իրավունքի անմիջական իրականացում (իմպլեմենտացիա), միջազգային իրավական նորմերի միասնականացում (ունիֆիկացիա), միջազգային իրավունքի անմիջական կիրառում:

5. Միջազգային իրավունքի իրացումը՝ որպես գործընթաց, պահանջում է պետության կողմից ձեռնարկելու իրավական և կազմակերպական միջոցներ՝ միջազգային իրավունքի նորմերի ժամանակին, համակողմանի և լիակատար իրականացման համար: Դա հավասարապես վերաբերում է նաև միջազգային իրավունքի այն նորմերին, որոնք հանդիսանում են ինքնաիրագործելի, իսկ առավել ամբողջական իրացման համար նույնպես ունեն ներպետական իրավունքի օգնության կարիք: Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների իրացման գործընթացը ներառում է՝ ա) անմիջական փաստացի գործունեությունը, որն իրականացվում է իրավական նորմերի պահանջներին համապատասխան՝ մարդուն վե-

րապահված իրավունքների ու ազատությունների անմիջական կիրառման միջոցով, բ) իրավական և կազմակերպական ապահովման գործունեությունը, որն իրականացվում է իրավասու մարմինների կողմից և ներառում է պետության իրավաստեղծ, վերահսկողական և իրավակիրառ բնագավառները: Քննարկվող ոլորտի միջազգային չափորոշիչների ամբողջական ու լիակատար իրացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում միասնական մոտեցումներ մշակելու կարիք կա, ինչը ենթադրում է նաև սահմանադրական և օրենսդրական որոշակի փոփոխությունների կատարման անհրաժեշտություն:

6. Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների ներպետական իրացման կառուցակարգերը երկուսն են՝ նորմատիվային և կազմակերպատիրական: Միջազգային նորմերի ներպետական իրացման նորմատիվային կառուցակարգն ընկալվում է որպես միջազգային իրավական նորմերի պահանջներին ներպետական իրավունքի սուբյեկտների գործունեության համապատասխանությունն ապահովող իրավական ակտերի համակցություն: Իսկ՝ կազմակերպատիրական կառուցակարգի ներքո անհրաժեշտ է հասկանալ պետական այն մարմինների համակարգը, որոնց գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, ուղղված է մարդու անձնական իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչների իրացմանը: Ներպետական իրավական ապահովման այդ կառուցակարգերը ենթադրում են միջազգային իրավունքի նորմերի իրավական որոշակիացման, մեկնաբանման ու պարզաբանման միջոցով այն համալիրի աշխատանքների կամ փաստացի գործունեության իրականացում, որը կհանգեցնի սոցիալական այն արդյունքի ստացմանը, որն ենթադրվում էր մինչև միջազգային պայմանագիրը կնքելը:

Հետազոտության գիտագործնական նշանակությունը: Սահմանադրական բարեփոխումների համատեքստում իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման վերաբերյալ տեսական հետազոտությունը հնարավորություն է տվել որոշակիորեն նպաստելու հիշյալ կտրվածքով իրավաստեղծ գործունեության որակի բարելավմանը, մշակելու այդ ոլորտում առկա թերություններն ու բացթողումները վերացնելու եղանակներ, սահմանելու այդ գործառույթի իրավական կարգավորման հարցադրումների շրջանակը, բացահայտելու ու կանխորոշելու դրա զարգացման հետագա ուղիները:

Աշխատության գիտագործնական նշանակությունը ընդգծվում է հետագա

իրավական բարեփոխումների ուղղությունները և եղանակները վերանայելու և դրանք առավել իրատեսական ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ կոնկրետ եզրահանգումների առաջադրմամբ: Կարծում ենք, դրանք կարող են ունենալ համապատասխան կիրառական արժեք և կնպաստեն բազմաթիվ թերությունների վերացմանը:

Ատենախոսության որոշ եզրահանգումներ կարող են պիտանի լինել սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների կոնկրետ հարցադրումներով գիտական հետազոտություններ իրականացնելու տեսանկյունից:

Այն կարող է նաև օգտակար լինել միջազգային իրավական ակտերի ներազդեցության գնահատման ինստիտուտի հետագա կատարելագործման և կիրառման շրջանակներն ընդլայնելու խնդիրների լուծման առնչությամբ:

Ատենախոսությունում արտացոլված առանձին տեսակետներ կարող են պիտանի լինել պետական իշխանության մարմինների կողմից՝ օրենքների կատարման միասնականություն ապահովելու սահմանադրական լիազորության իրականացման բարելավման խնդիրների գիտագործնական քննարկումների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը և արժանահավատությունը: Ատենախոսությունում արտացոլված հետազոտության արդյունքները հիմնված են սահմանադրական բարեփոխումների համատեքստում իրավաստեղծ գործունեության վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ՝ արտասահմանյան երկրների համապատասխան իրավական ինստիտուտների ձևավորման և իրավական կարգավորման փորձի գիտական համակողմանի ու անաչառ վերլուծության վրա, ինչպես նաև հիմնավորված և փաստարկված են պետական իրավասու մարմինների գործունեության համապատասխան նյութերով:

Ատենախոսության առանձին եզրահանգումների համար հիմք են հանդիսացել միջազգային կազմակերպությունների, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական համացանցային էջերում զետեղված նյութերը և այդ մարմինների արխիվային նյութերը:

Միաժամանակ, նկատի ունենալով առանձին երկրների իրավաստեղծ գործունեության փորձն ու առանձին ենթակառուցվածքային հարցադրումներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, վերլուծվել են մի շարք օտարերկրյա պետությունների կառավարությունների և այլ իրավասու մարմինների պաշտոնական համացանցային էջերը:

Ատենախոսությունում օգտագործված մասնագիտական տարբեր գրակա-

նության նյութերի ուսումնասիրության միջոցով համադրվել են տարբեր իրավական համակարգերի ներկայացուցիչների դիրքորոշումները միևնույն հարցադրումների վերաբերյալ և փորձ է արվել ընտրել դրանցից՝ հայրենական իրավական համակարգին առավել բնորոշ և կիրառման համար պիտանի մոտեցումները:

Ուսումնասիրության արդյունքների ներդրումն ու փորձարկումը: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Դրանց առավել առանցքային նշանակություն ունեցող մասերը ներկայացվել են Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում կազմակերպված գիտաժողովներում: Ատենախոսության հիմնադրույթները հեղինակի կողմից ներկայացվել և քննարկվել են դասախոսական գործունեության ընթացքում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ատենախոսության առանձին հատվածներ, համապատասխան եզրահանգումներով ու հիմնավորումներով ուղարկվել են մի շարք իրավասու պետական մարմիններ և հասարակական միավորումներ:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված, ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ ու ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Մասնավորապես, նախ՝ հետազոտվել են մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների տեսաիրավական հիմնահարցերն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային չափորոշիչների համատեքստում, իսկ այնուհետև ներկայացված է վերլուծություն՝ կապված այդ չափորոշիչների ներպետական իրացման կառուցակարգերի վերաբերյալ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և եզրափակիչ մասից: Կցված է օգտագործված գրականության ցանկը: Բաղկացած է 180 էջից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիակա-նությունը, ներկայացվել են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մետոդաբանական հիմքը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների

փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աշխատանքի առաջին գլուխը (Մարդու անձնական իրավունքներն ու ազատությունները ներպետական և միջազգային իրավական կարգավորման համատեքստում. Տեսաիրավական հիմնահարցերը) բաղկացած է 2 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում (Անձնական իրավունքներն ու ազատությունները որպես մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակի տարր) մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները բնութագրող հատկանիշները հետևյալներն են՝ ա) դրանք ունեն իրական բնույթ, այսինքն, մարդու՝ որպես անհատի նկատմամբ այդ իրավունքները բնութագրում են նրա բնական և անհրաժեշտ վիճակը, և դառնում են իրավունքով ճանաչվող, պաշտպանվող և ապահովվող միայն իրավական ձևակերպում ստանալիս, բ) դրանք անօտարելի են, այսինքն՝ եթե մարդուն չեն նվիրում, ապա նա չի կարող նվիրել, վաճառել, ժառանգաբար փոխանցել այդ իրավունքները, քանի որ դրանք անձից անբաժանելի են և գոյություն ունեն մարդու կեցության փաստի ուժով, գ) դրանք գտնվում են մշտական օգտագործման իրավիճակում և դ) դրանց անմիջականորեն իրացումն է կամ սահմանադրորեն ամրագրված ու պետության կողմից երաշխավորված հնարավորությունների իրականացումը հասարակական գործընթացներում:

Երկրորդ պարագրաֆը (Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային իրավական չափորոշիչները) նվիրված է Անձի անձնական իրավունքների ու ազատությունների իրացման նպատակով աշխարհի գրեթե մեծամասնություն կազմող երկրներում մշակված և ճանաչված միջազգային իրավական չափորոշիչներին: Դրանք ընկալվում են որպես միջազգային իրավական հիմնարար փաստաթղթերում ամրագրված նորմերի համակցություն, որոնք ներառում են մարդու՝ կենսականորեն անհրաժեշտ բոլոր անձնական իրավունքները, դրանց անմիջական իրականացման ու պաշտպանության երաշխիքները, ինչպես նաև այդ նորմերի գործնականում պաշտպանության ու ապահովման կառուցակարգերը:

Մարդու իրավունքների ոլորտում ժամանակակից միջազգային չափորոշիչները, որոնց պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունը, իրենցից ներկայացնում են մարդու անձնական իրավունքները և դրանց ապահովման երաշխիքներն ամրագրող նորմերի համակցություն, որոնք իրենց նորմատիվային ամրագրումն են ստացել մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրում, Քաղաքական և Քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և մի շարք կոնվենցիաներում (Խոշտանգումների և

այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան և այլն), տարածաշրջանային մակարդակում՝ Եվրոպական կոնվենցիայում և դրան կից Արձանագրություններում, այլ Եվրոպական կոնվենցիաներում՝ վավերացված Հայաստանի Հանրապետության կողմից, ինչպես նաև ԱՊՀ կոնվենցիայում: Հիմնական խնդիրն այն է, որ անձի անձնական այս կամ այն իրավունքի համար առավել ամբողջական չափորոշիչները կազմավորող նորմերը պարունակվում են տարբեր միջազգային իրավական փաստաթղթերում: Ընդհանրացնելով ասվածը՝ հարկ է նկատել, որ մինչև օրս չկա միջազգային իրավական այն եզակի փաստաթուղթը, որը պատունակի մարդու իրավունքների միջազգային բոլոր չափորոշիչները, հետևաբար, հայաստանյան օրենսդիրն ու իրավակիրառողն անհրաժեշտ է մշտապես դիմեն տարբեր միջազգային պայմանագրային նորմերի վերլուծությանը:

Աշխատանքի **երկրորդ գլուխը** (Մարդու անձնական իրավունքների բնագավառում ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության տեսության և պրակտիկայի հիմնահարցերը) բաղկացած է 2 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում (Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնական հայեցակարգերը. Էությունն ու նշանակությունը մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման գործում) կարևորվում են ներպետական և միջազգային իրավունքի նորմերի միջև սերտ փոխգործակցության ու փոխկապվածության առկայությունը մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ու ապահովման կառուցակարգերում: Այդ հարաբերակցության հիմքում ընկած են երկու հիմնական հայեցակարգեր՝ դուալիստական և մոնիստական, որոնք արտացոլում են այս կամ այն պետության՝ իրականում գոյություն ունեցող շահերը և չեն կարող բացարձականացվել: Այս կամ այն հայեցակարգի ընտրությամբ է պայմանավորված, թե պետությունը ինչպիսի իրավական համակարգ է կառուցելու, որպեսզի ապահովի միջազգային պարտավորությունների կատարումը, այդ թվում՝ մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում: Իսկ դա կարող է իրականացվել ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության, մասնավորապես, ուղղություններն ու ձևերն ընդգրկող կառուցակարգերի միջոցով: Պրակտիկայում, անկախ նրանից, թե հայեցակարգերից որն է պաշտպանվում, անհրաժեշտ է լուծել միևնույն հարցերը, դրանք են՝ երկրի տարածքում միջազգային նորմերը գործողության մեջ դնելու, միջազգային իրավական նորմերի իրականացման արդյունավետ կառուցակարգի ստեղծման, ինչպես նաև ներպետական և միջազգային իրավունքի նորմերի կոլիզիաների կանխման և լուծման

վերաբերյալ:

Երկրորդ պարագրաֆում (Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման ներպետական ու միջազգային իրավական կառուցակարգերը, փոխգործակցության ուղղությունները և ձևերը) հեղինակն վերլուծության է ենթարկել միջազգային պրակտիկան և մասնագիտական գրականությունը և կատարել եզրակահանգումներ: Միջազգային և ազգային իրավունքի փոխգործակցությունն ենթադրում է հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն, որը կարող է իրագործվել բացառապես պետությունների միջև առկա ակնհայտ արտահայտված համաձայնության հիման վրա, բնականաբար, ազգային իրավունքի նորմերը, ի տարբերություն ներպետական իրավական այլ միջոցների, ուղղակի ներգործություն են ունենում պետության կամաարտահայտման վրա, ինչպես նրա միջազգային իրավական դիրքորոշման արտահայտման մասով, այնպես էլ՝ միջազգային իրավաստեղծ գործընթացներին անմիջական մասնակցության առումով:

Այս տրամաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական և միջազգային իրավունքի փոխգործակցության հիմքում ընկած է այդ փոխգործակցության կառուցակարգի բաղկացուցիչ մաս կազմող ներպետական իրավունքի վրա միջազգային իրավունքի ազդեցության ձևերը, մեթոդներն ու դրանցով պայմանավորված սահմանների սահմանումը, որոնք առավել հստակ դրսևորվում են մարդու և քաղաքացու անձնական իրավունքներին ու ազատությունների ոլորտում: Հայաստանի Հանրապետությունում դրանք իրացվում են հետևյալ ձևերով՝ միջազգային իրավունքի անմիջական իրականացում (իմպլեմենտացիա), միջազգային իրավական նորմերի միասնականացում (ունիֆիկացիա), միջազգային իրավունքի անմիջական կիրառում:

Աշխատանքի **երրորդ գլուխը** (<< իրավական համակարգում մարդու անձնական իրավունքների և ազատությունների միջազգային չափորոշիչների իրացման հիմնախնդիրները) բաղկացած է 3 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների նորմերում մարդու անձնական իրավունքների միջազգային իրացումը) նվիրված է միջազգային իրավունքի իրացմանը՝ որպես գործընթաց, որը պահանջում է պետության կողմից ձեռնարկելու իրավական և կազմակերպական միջոցներ՝ միջազգային իրավունքի նորմերի ժամանակին, համակողմանի և լիակատար իրականացման համար: Դա հավասարապես վերաբերում է նաև միջազգային իրավունքի այն նորմերին, որոնք հանդիսանում են ինքնաիրագործելի, իսկ առավել ամբողջական իրացման համար նույնպես

ունեն ներպետական իրավունքի օգնության կարիք:

Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների իրացման գործընթացը ներառում է՝ ա) անմիջական փաստացի գործունեությունը, որն իրականացվում է իրավական նորմերի պահանջներին համապատասխան՝ մարդուն վերապահված իրավունքների ու ազատությունների անմիջական կիրառման միջոցով, բ) իրավական և կազմակերպական ապահովման գործունեությունը, որն իրականացվում է իրավասու մարմինների կողմից և ներառում է պետության իրավաստեղծ, վերահսկողական և իրավակիրառ բնագավառները:

Երկրորդ պարագրաֆը (Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների միջազգային իրավական չափորոշիչների ներպետական իրացման նորմատիվային կառուցակարգը) նվիրված է Միջազգային նորմերի ներպետական իրացման նորմատիվային կառուցակարգին, որն ընկալվում է որպես միջազգային իրավական նորմերի պահանջներին ներպետական իրավունքի սուբյեկտների գործունեության համապատասխանությունն ապահովող իրավական ակտերի համակցություն:

Երրորդ պարագրաֆը (Մարդու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների ներպետական իրացման կազմակերպահրավական կառուցակարգը) վերլուծության է ենթարկում մարդու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների ներպետական իրացման կազմակերպահրավական կառուցակարգը:

Կազմակերպահրավական կառուցակարգի ներքո անհրաժեշտ է հասկանալ պետական այն մարմինների համակարգը, որոնց գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, ուղղված է մարդու անձնական իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչների իրացմանը:

Ներպետական իրավական ապահովման այդ կառուցակարգերն ենթադրում են միջազգային իրավունքի նորմերի իրավական որոշակիացման, մեկնաբանման ու պարզաբանման միջոցով այն համալիրի աշխատանքների կամ փաստացի գործունեության իրականացում, որը կհանգեցնի սոցիալական այն արդյունքի ստացմանը, որն ենթադրվում էր մինչև միջազգային պայմանագիրը կնքելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ատենախոսությունում նպատակ էր դրված հետազոտել մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ապահովման հարցերով միջազգային իրավունքի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները: Կատարված հետազոտության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները.

1) Մարդու և քաղաքացու անձնական իրավունքները՝ բնական, անօտարելի, անմիջականորեն իրագործելի, մարդու գոյության անքակտելի պայմանները կազմող՝ մշտական օգտագործման վիճակում գտնվող՝ առավել արժեքավոր բարիքների իրականացման գործում անհատի հնարավորություններն են, որոնք ճանաչվում և երաշխավորվում են պետության կողմից:

2) Մարդու իրավունքների, բոլոր մարդկանց ձևական հավասարության գաղափարը ծնվել է դեռևս անտիկ Հին Հունաստանում: Այդ գաղափարն իր զարգացումն է ստացել Եվրոպայում քրիստոնեության տարածման հետ: Առաջին անգամ անձնական իրավունքները իրենց արտացոլումը գտան այնպիսի իրավաբանական փաստաթղթում, ինչպիսին անգլիական 1215 թվականի Ազատությունների մեծ խարտիան է: Հետագայում գործնականում բոլոր հիմնական անձնական իրավունքներն իրենց ամրագրումը գտան այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են Habeas Corpus Act, ֆրանսիական 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը, ԱՄՆ 1787 թվականի Սահմանադրությունը և ամերիկյան Իրավունքների մասին բիլլը: Միջազգային հարաբերությունների զարգացման արդյունքում, հաշվի առնելով Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր հետևանքները, պետությունների մոտ մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անհրաժեշտություն առաջացավ: Արդյունքում՝ մշակվեցին մարդու անձնական իրավունքների և ազատությունների ոլորտում ժամանակակից միջազգային չափորոշիչներ: Դրանք իրենց արտահայտումը գտան ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ՄԱԿ-ի 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, տարածաշրջանային մակարդակում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում և որոշակիացվեցին ավելի ուշ ընդունված տարբեր կոնվենցիաներում:

3) Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի կայացումը և զարգացումն անխուսափելիորեն առաջադրում է ներպետական իրավունքի հետ դրանց հարաբերակցության հարցը, և այս

պարագայում կարևոր նշանակություն է ձեռք բերում պետության կողմից միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հայեցակարգի ընտրությունը: Ներկա ժամանակներում աշխարհում գերակայում են երկու հիմնական հայեցակարգեր՝ դուալիստական և մոնիստական, որոնք հաստատում են միջազգային իրավունքի առաջնությունը: Ինչ վերաբերում է մեր երկրին, ապա այստեղ չի կարելի միանշանակ ասել, որ Հայաստանի Հանրապետությունն իր համար ընտրել է որոշակի հայեցակարգ, երբ, մի կողմից, գործում են դուալիստական հայեցակարգի դրույթներն առ այն, որ միջազգային և ներպետական իրավունքն ինքնուրույն, բայց, ընդ որում, միմյանց միջև փոխգործակցող համակարգեր են, իսկ մյուս կողմից՝ չի կարելի հաշվի չառնել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որում միջազգային պայմանագրերը ճանաչվում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի մաս, ինչպես նաև ընդունվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերի գերակայությունը օրենքների նորմերի նկատմամբ, ինչը տեղավորվում է ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի առաջնության մոնիստական հայեցակարգի շրջանակներում:

Բայց եթե ուշադրությամբ դիտենք պետության օրենսդրությունը և պրակտիկան, ապա կստացվի, որ դեպքերի մեծ մասում խոսքը վերաբերում է ոչ թե միջազգային նորմերի բացարձակ գերակայությանը, այլ հարաբերակցության ավելի մեղմ բնույթին, ինչը կարելի է սահմանել որպես «առաջնայնություն»: Իրոք, չէ՞ ոչ միջազգային նորմերը մեր երկրի տարածքում գործում են միայն ինքնին սահմանադրական նորմի ուժով, և դրանց առաջնայնությունը չի տարածվում ՀՀ Սահմանադրության վրա: Բացի դրանից, պետք է խոսել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սոսկ միջազգային պայմանագրերի կիրառման կանոնների առաջնայնության մասին, այսինքն՝ միջազգային պայմանագիրն ընդհանուր առմամբ չի վերացնում ներպետական օրենսդրության գործողությունը: Այսպիսով, ժամանակակից Հայաստանի Հանրապետությունում կարելի է խոսել քննարկվող երկու հայեցակարգերի որոշակի զուգակցման մասին:

4) Ինչպիսի տեսական հայեցակարգի էլ որ հետևենք՝ ժամանակակից միջազգային իրավունքի և ընդհանրապես Հայաստանի Հանրապետության ներպետական իրավունքի հարաբերակցության բնույթի մասին և մասնավորապես միջազգային իրավունքի առաջնության մասին հարցը լուծելիս, անհրաժեշտ է ելնել երկու փոխկապակցված, փոխգործակցող և որոշակիորեն միմյանց լրացնող գործոններից՝ ա) համաշխարհային պետաիրավական հանրության մեջ Հայաստանի Հանրապետության և նրա իրավական համակարգի առավել խոր ու բազմակողմանի ընդգրկվածության գործոնից, բ) նրա անօ-

տարելի ինքնիշխանության գործունից՝ որով հաշվի առնելով միջազգային իրավունքը, «ամրագրելով պետության իրավունքը որոշելու իր իրավական համակարգը», դրա հետ մեկտեղ, սահմանել է, որ «ինքնիշխան իրավունքներն իրականացնելիս, ներառյալ օրենքներ ընդունելու իրավունքը, պետությունները համակերպվում են միջազգային իրավունքի առումով իրենց պարտավորություններին»:

5) Ներպետական և միջազգային իրավունքը գտնվում են մշտական փոխգործակցության և միմյանց վրա փոխազդեցության գործընթացում: Ընդ որում, սկզբնականն այստեղ ներպետական իրավունքի ազդեցությունն է միջազգայինի վրա: Առավելապես դա վերաբերում է մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտին: Նախապես ծագելով ազգային մակարդակում (խոսքը ֆրանսիական 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի և այլ փաստաթղթերի մասին է) մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ նորմերը դարձան միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներ և նորմեր, ժամանակակից միջազգային չափորոշիչներ: Իսկ այնուհետև արդեն մեծամասնություն կազմող պետությունները (այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը) ընդունեցին միջազգային իրավական այդ նորմերը և իրենց սահմանադրություններում ներառեցին նորմերի ամբողջական հատված՝ նվիրված մարդու իրավունքներին ու ազատություններին:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի վրա ներգործում են երկու եղանակով: Դրանք կամ իմպլեմենտացիայի են ենթարկվում մեր օրենսդրության մեջ, կամ կարող են գործել անմիջականորեն՝ ՀՀ Սահմանադրամբ և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում: Այսպիսով, նույնիսկ միջազգային նորմերի ուղղակի կիրառումը միջնորդավորվում է պետության կամքով:

6) Մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցության ժամանակ ծագող կենտրոնական հիմնախնդիրը պետության կողմից իր միջազգային իրավական պարտավորությունների իրագործումն է:

Առավել լիակատար իրագործման համար անհրաժեշտ է երկրի օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը գործող միջազգային չափորոշիչներին, որի համար պետք է հստակորեն սահմանել դրանց բովանդակությունը: Մեր երկրի համար այս փուլում բարդությունն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է մարդու իրավունքների հարցերով պայմանագրերի մասնակից միաժամանակ և՛ համապարփակ (ունիվերսալ), և՛ տարածաշրջանային (Եվրոպայի խորհրդի և Անկախ պետությունների համա-

գործակցության մակարդակով) և պարտավոր է ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել դրանց: Տվյալ փաստաթղթերում պարունակվող՝ անձնական իրավունքների վերաբերյալ նորմերը հաճախ տարբերվում են միմյանցից և փոխլրացնում միմյանց, ուստի այս կամ այն իրավունքի համար առավել լայն չափորոշիչի բացահայտման նպատակով իրավակիրառողը պետք է դիմի միաժամանակ մեծաթիվ փաստաթղթերի, ինչը բարդ ու բազմաբովանդակ գործընթաց է: Այսպիսով, ժամանակն է միջազգային մակարդակով մարդու իրավունքների մասին նոր փաստաթղթի ընդունման անհրաժեշտությունը, որը կընդհանրացնի ողջ կուտակված փորձը և կձևավորի առավել լիարժեք չափորոշիչներ մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում:

7) Հատկապես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացման շնորհիվ՝ մեծ նշանակություն ձեռք բերեց Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ միջազգային իրավունքին համապատասխանության հարցը: Ժամանակակից օրենսդրության վերլուծությունը ցույց տվեց, որ այն հիմնականում համապատասխանում է մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային չափորոշիչներին և վերջին ժամանակներս դրա համար շատ բան է արվել: Սակայն մի շարք դրույթների առումով Հայաստանի Հանրապետությունը, համեմայնդեպս, ոչ լիովին է համապատասխանում ընդունված միջազգային չափորոշիչներին: Եվ թեև մարդու իրավունքների հարցով բազմաթիվ միջազգային նորմեր կարող են անմիջականորեն կիրառվել երկրի տարածքում: Հայաստանի Հանրապետության կողմից իր միջազգային պարտավորություններն առավել լրիվ իրացնելու համար անհրաժեշտ է դրանց արտացոլումը երկրի օրենսդրությունում (նախևառաջ՝ սահմանադրական), քանզի մեր իրավակիրառողը կողմնորոշված է ամենից առաջ դեպի ներպետական իրավական ակտերը:

8) Մարդու անձնական իրավունքների ու ազատությունների ոլորտում ժամանակակից միջազգային չափորոշիչներին գործնական համապատասխանության հասնելու համար հրատապ է միջազգային իրավունքի նորմերի իրացման և ներպետական կառուցակարգում միջազգային իրավունքի նորմերի իրացման մասին հարցը: Պետության ներսում միջազգային նորմերի իրացման կառուցակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է լուծել մի շարք հարցեր.

- Միջազգային իրավունքի հանրաձանաչ սկզբունքներն ու նորմերը, այնպևնով, որքևնով դրանք ամրագրված են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրով, հանդիսանում են ՀՀ իրա-

վական համակարգի մաս (Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մաս), բայց, համենայնդեպս, ոչ միջազգային մակարդակում, ոչ երկրի ներսում առկա չէ այդ սկզբունքների ու նորմերի միասնական ցանկ, չկա դրանց սահմանման նկատմամբ միասնական մոտեցում: Ուստի անհրաժեշտ է ընդունել Հայաստանի Հանրապետության օրենք, որը կսահմանի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգից բխող՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի ցանկը:

- Ակնհայտ է երկրի միջազգային պարտավորությունների կատարմանը նվիրված հատուկ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ պահանջը, որը կնախատեսի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության նորմերի միջև կոլիզիաների լուծման կարգը: Այդպես էլ բաց է մնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենքների իրավաբանական ուժի հարաբերակցության հարցը:

- Անհրաժեշտ է հատուկ մարմին, որը կգրառվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ իր միջազգային իրավական պարտավորություններին համապատասխանության հատուկ իրավաբանական փորձաքննությամբ: Բացի դրանից, այդ մարմինը կկարողանա տալ Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն միջազգային պայմանագրերը կնքելու նպատակահարմարության մասին, ինչպես նաև կնքված միջազգային պայմանագրերի վերաբերյալ կոնկրետ վերապահումների անհրաժեշտության մասին եզրակացություններ:

- Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի լավագույն ձևով իրացման համար պետք է առավել լայնորեն օգտագործել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հնարավորությունները, և հատկապես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով հաստատված միջազգային պայմանագրերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննության առնելու նրա իրավասությանը վերապահելու հարցով:

Բացի դրանից, պետք է օգտագործել ՀՀ սահմանադրական դատարանի հնարավորություններն ստուգելու միջազգային պայմանագրերի վավերացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը, ինչը թույլ կտա խուսափել արդեն ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերի հետ կոլիզիաներից:

- Անհրաժեշտ է լուծել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ակտերի՝ իրավակիրառողների լայն շրջանակին մատչելիության հիմնախնդիրը: Դրա համար անհրաժեշտ է դրանց առավել լայնորեն հրապարակում:

Այդ կապակցությամբ բաց է մնում Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի նախադեպի՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հետ հարաբերակցության հարցը, համաձայն որոնց՝ այլ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո: Այդ խնդրով պայմանավորված առաջարկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն վճիռները, որոնք ունեն նախադեպային նշանակություն, հրապարակել պաշտոնական հրատարակություններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնական հայեցակարգերը. էությունն ու նշանակությունը մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման ոլորտում. «Արդարադատություն», Երևան, 2012, № 3(18), էջ 56-66:
2. Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների և ազատությունների ապահովման ներպետական և միջազգային իրավական կառուցակարգերը, փոխգործակցության ուղղությունները և ձևերը. «Ղատական իշխանություն», Երևան, 2012, №11/160 էջ 27-35:
3. Մարդու անձնական իրավունքների ու ազատությունների միջազգային չափորոշիչների ՀՀ ներպետական իրացման կազմակերպատիրավական կառուցակարգերը. «Հայագիտական հանդես», Երևան, 2012, №3/20 էջ 136-154:

ЭДУАРД МЕЛСИКОВИЧ АВАГЯН
РЕЗЮМЕ

**ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО И
КОНСТИТУЦИОННОГО ПРАВА РА В СФЕРЕ
ОБЕСПЕЧЕНИЯ ЛИЧНЫХ
ПРАВ ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА**

Диссертационная работа посвящена анализу взаимодействия путей и форм конституционного права, выявлению личных прав человека и гражданина в конституционных нормах.

Основная цель исследования по автору, выявить сущность соотношений международного права и норм национального права, выявить проблемы соотношений этих систем и при обеспечении личных прав человека и гражданина, формировать международные и внешнегосударственные теоретические основы прав и разработать аспектные подходы развития их соотношений, предлагая конституциональные и законодательные соответствующие изменения.

Не изменяя данной цели, автор старался дать соответствующие решения выявленным проблемам, в частности исследовав основные личные права и свободы человека в обеспечении международных концепций, и межправовых соотношений основных концепций, выясняя их сущность, особенности и значения, анализируя в сфере личных прав и свободностей человека внешне государственные нормативные и организованно правовые механизмы.

Научное новое диссертации, в первую очередь выражается в том, что в отечественной правоведении в первый раз автор старается всесторонне исследовать реализационные нормативные и организаторские механизмы проблемы человеческих личных прав в законах и конституции Республики Армения, а также на основе международной исследовательской практике представить научно-обоснованные предложения с целью дальнейшего эффективного роста конституционно-правовых статусов человека и гражданина.

Научное значение работы состоит в том, что со стороны автора личные права и свободы человека на основе международных правовых концепциях выявились внешнегосударственные и международные основные проблемы, особенно в Республике Армения в 2005 году в контексте конституциональных перемен. Несколько выводов могут быть полезными с точки зрения конституциональных и законодательных научных исследований.

Для адекватного решения проблем возникших в результате текущих исследований, была выбрана такая особенная форма работы, которая дала возможность представить весь изучаемый материал с необходимой глубиной и целостностью. В частности, с самого начала были исследованы основополагающие теоретико-правовые проблемы как в национальном, так и интернациональном контекстах, сразу после чего материал был представлен для аналитических выводов напрямую связанных с внутригосударственными конструктивными порядками реализации личных прав и свобод человека и гражданина. Диссертация состоит из предисловия, трех глав и заключительной части. Также в работе имеется в наличии список использованной литературы.

В Предисловии была обоснована современность изучаемой темы, была представлена степень изученности темы, исследовательская цель и связанные с ней проблемы, объект и предмет, научно-источниковедческая и методологическая база диссертации, научная инновационность, теоретическое и практическое значение всего исследования, проба результатов, структура диссертации, а также основные тезисы представляемые к защите.

В первой главе диссертации были исследованы личные права и свободы человека в контекстах внутригосударственного и международного урегулирования.

Во второй главе диссертации были представлены основополагающие проблемы и задачи взаимодействия теории и практики личных прав человека в насущных сферах внутригосударственного и международного права.

В третьей главе диссертации материал был посвящен основным проблемам реализации международных правовых норм соблюдения личных прав и свобод человека в юридической системе РА (Республики Армения).

Выводы и предложения сформировавшиеся в результате исследовательской работы были включены в секцию предложений (заключительную часть).

Выводы и заключения, основополагающие тезисы и предложения нашедшие свое место в диссертации, равносильным и пропорциональным образом отражены самим автором в его опубликованных научных статьях. Их наиболее фундаментально важные части были представлены в ходе работы научной конференции организованной в стенах Армяно-Русского (Славянского) университета. Основополагающие тезисы диссертации были представлены автором и обсуждены со стороны широкой аудитории в течении его учительской лекционной деятельности.

Avagyan Eduard

RESUME

**PROBLEMS OF RATIOS OF THE CONSTITUTIONAL AND
INTERNATIONAL LAW OF RA IN THE SPHERE OF ENSURING
PERSONAL HUMAN AND CITIZEN RIGHTS**

Dissertational work is devoted to the analysis of interaction of ways and forms of a constitutional law, identification of personal human and citizen rights in the constitutional norms.

The main objective of research on the author to reveal essence of ratios of international law and norms of the national right, to reveal problems of ratios of these systems and when ensuring personal human rights and the citizen, to form the international and governmental theoretical bases of the rights and to develop aspect approaches of development of their ratios, offering legislative corresponding changes.

Without changing this purpose, the author tried to give the relevant decisions to the revealed problems, in particular having investigated the basic personal rights and liberty of the person in providing the international concepts, and interlegal ratios of the main concepts, finding out their essence, features and values, анализирував in the sphere of the personal rights and liberty of the person outwardly state standard and orderly legal mechanisms.

Scientific new in dissertation, first of all it is expressed that in domestic jurisprudence for the first time the author tries to investigate comprehensively standard and organizing mechanisms of a problem of the human personal rights in laws and the Republic Armenia constitution, and also on the basis of the international research practice to present scientific and reasonable offers for the purpose of further effective growth of constitutional legal statuses of the person and the citizen.

Scientific value of work consists that from the author the personal rights and liberty of the person on the basis of the international legal concepts came to light the intergovernmental and international main problems, especially in the Republic Armenia in 2005 in a context of legal changes. Some conclusions can be useful from the point of view of legal and legislative scientific researches.

Stipulated by the primary considerations of adequately solving the problems suggested by analytical research, such structure of scientific work was chosen that would allow presenting the research material with necessary deepness and wholesomeness.

Specifically, at first the main theoretical and legal questions of the person's and citizen's personal rights and freedoms were investigated as in national, and as well as in international measurable standards' contexts, and then the analytical conclusion was presented concerning in-state realization of the constructional orders connected with that measurable standards. The dissertation consists from introduction, three chapters and conclusion part. Attached is the list of used literature sources.

In Introduction contemporaneousness of the research subject was substantiated, scientific research degree was presented, research aim and related tasks, object and subject, methodological and scientific source base, scientific innovation, theoretical and practical significance of research, trial of results, dissertation structure, as well as presented dissertation defending theses were unveiled.

First Chapter of dissertation investigated personal rights and freedoms of the individual in in-state and international legal ordering contexts.

Second chapter of dissertation presented main principal questions of theory and practice of mutually dependent interaction of in-state and international law in the field of individual's personal rights.

Third chapter of dissertation was dedicated to main principal problems of international measuring standards of individual's personal rights and freedoms in the legal system of RA (Republic of Armenia).

The conclusions and suggestions that formed as a result of conducted research activities were included in the suggestions section (the conclusion part).

The conclusions, main principal propositions and related suggestions that were presented in the dissertation, were equally reflected upon by the author in his published scientific articles.

The parts of it having the most fundamental significance were presented to audience during scientific meetings organized at Armenian-Russian (Slavic) university. The main theses of the dissertation were presented and discussed by the author during the educational lecturing activities.